ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՑԱԽՈՒՄ 1991-2020ԹԹ. *

ՀՏԴ +008 (479.243)

Էդիկ Մինասյան
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում մամուլի, արխիվային նյութերի, հրապարակում եղած գրականության, փաստերի վերլուծությամբ ցույց է տրվում Արցախում պատերազմական ծանր իրավիճակում կրթամշակութային կյանքի բազմաթիվ խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ արցախահայերի մղած հերոսական պայքարը: Արցախահայության տոկունության շնորհիվ պահպանվեցին ոչ միայն կրթամշակութային կյանքում ձեռք բերած հաջողությունները, այլև վերափոխումների շնորհիվ դրանք նոր զարգացումներ ունեցան 20-րդ դ. դարավերջին և 21-րդ դարասկզբի երկու տասնամյակներում:

Դառնալով անկախ հանրապետություն՝ Արցախը նույնպես հնարավորություն ստացավ փոխել գոյություն ունեցող քաղաքական կարգը և ինքնուրույն լուծել իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական և կրթամշակութային հիմնախնդիրները: ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: ՀՀ-ի օրինակով մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, որով հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվեր հայկական դպրոցներում: Առաջնահերթ նշանակություն էր տրվում տվողների ազգային դաստիարակությանը, հասարակական ակտիվությանը, գիտելիքների, կարողությունների, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ժամանակագրական առումով Արցախի հանրապետության կրթական համակարգի ձևավորման, վերափոխումների գործընթացն ու զարգացման ուղղությունները դիտարկվում են անցումային (1991-1995), կայունացման (1996-2002), կայացման (2002-2008), և արմատական վերափոխումների ու զարգացման (2008-2020) փուլերով: Ըստ էության Արցախի կրթամշակութային համակարգն ամբողջությամբ ներառվեց Հայաստանի կրթամշակութային համակարգի մեջ, ինտեգրվեց նրան: Բազմաթիվ փաստերով ցույց է տրվում հետպատերազմյան շրջանում, թե ինչպիսի առաջընթաց է նկատվում հանրակրթական դպրոցների ցանցի ընդլայնման, ուսուցիչների և տվողների քանակական աճի, հանրակրթության որակի բարձրացման ասպարեզում: Վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությամբ ցույց է տրվում Հայ բարեգործական կազմակերպությունների և անհատ բարերարների ներդրումների շնորհիվ ԼՂՀ ազատագրված տարածքներում և բուն մայրաքաղաքում կատարված հսկայական դպրոցաշինությունը, կրթամշակութային նոր օջախների կառուցումը, հրատարակչական գործի, մամուլի նոր օրգանների ի հայտ գալը, գրադարանային ցանցի ընդլայնումը, թանգարանների,

---

* Հոդվածը ներկայացվել է 12.04.2022:
Տպագրության է երաշխավորել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ. Հ. Հովհաննիսյանը: 20.04.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 20.04.2022:

նշանավոր գործիչների տուն-թանգարանների, գիտական, մշակութային, ազգագրական կարևոր կենտրոնների, թատերական և դերասանական ստուդիաների երաժշտական և արվեստի դպրոցների բացումը, ճարտարապետական և քանդակագործական համալիրների ստեղծումը և այլն: Միաժամանակ կարևորվում են կրթամշակութային կյանքը կարգավորող և դրանց զարգացմանն ուղղված Արցախի կառավարության ընդունած օրենքներն ու օրենսդրական ակտերը: Փաստերի վերլուծությամբ ցույց է տրվում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսի համազգային ծրագրի կենսագործման փուլերը, մշակույթի արվեստի ու կրթության ներկայացուցիչների փոխայցելություններն ու համատեղ միջոցառումները ՀՀ-ի, Արցախի և արտերկրի երիտասարդական կազմակերպությունների միջև: Բացահայտվում են նաև կրթամշակութային կյանքում տեղ գտած թերություններն ու սխալները: Դրաց հետ միասին վերլուծվում և ցույց են տրվում այն առաջընթացն ու վերելքը, որը նկատելի էր Արցախի կրթամշակութային կյանքում մինչև 2020թ. -ի 44-օրյա աղետալի պատերազմը:

Բանալի բառեր՝ *Արցախի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Կրթական վերափոխումներ, մշակութային կյանք, դպրոցներ, նախադպրոցական կրթություն, Արցախի պետական համալսարան, թերթեր, ամսագրեր, գրադարան, թատրոն, ճարտարապետություն և քանդակագործություն, կրթամշակութային օջախներ:*

Ներածություն

1988 թ. փետրվարից արցախահայությունը նոր ուժով ու եռանդով ելավ պայքարի հանուն ազատության, անկախության, հանուն հայրենիքի միասնության և ազգային արժանապատվության: Այդ ազգային ազատագրական պայքարի շնորհիվ արցախահայությունը վերջնականապես ազատվեց Ադրբեջանի գաղութային լծից և վերականգնեց շուրջ յոթ տասնամյակ կորցրած իր անկախությունը:

1991թ. սեպտեմբերի 2-ը Արցախի բազմադարյան պատմության մեջ մտավ որպես հայկական երկրորդ պետության ստեղծման օր, քանզի այդ օրն ընդունվեց հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) հռչակման մասին: Այդ օրվանից նորաստեղծ հանրապետությունն իր պատմության առաջին տասնամյակներում անցել է բարդ ու դժվարին ուղի՝ լեցուն կորուստներով ու ձեռքբերումներով, անկումներով ու վերելքներով: Մի կողմից՝ շրջափակումը, պատերազմը, մարդկային, նյութական ու հոգևոր կորուստները, մյուս կողմից՝ ազատ ու անկախ ապագան կերտելու արցախցիների անկոտրում կամքը դարձան երկիրը փլատակներից վեր հանելու, անկախ պետականություն հաստատելու, զարգացման ու ամրապնդման ճանապարհն անշրջելի դարձնելու համար կարևոր կռվաններ:

Անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես մայր Հայաստանում, այնպես էլ Արցախի նորաստեղծ հանրապետությունում ընթացող հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները խորապես ազդեցին ժողովրդի կենսագործունեության բոլոր դրսևորումների վրա: Այդ ազդեցության ուժգնությունն այնքան մեծ էր, որ հավակնում էր փոխելու հայ մարդուն, նրա նկարագիրը և արժեքային համակարգը: Նմանօրինակ լայնածավալ հասարակական վերափոխումների կենտրոնում, բնականաբար, պետք է հայտնվեր հասարակության ամենախոշոր և ամենաազդեցիկ ենթա-

կառույցներից մեկը՝ կրթամշակութային համակարգը:

Հայաստանի անկախության սկզբնական շրջանում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններին զուգընթաց վերափոխումներ սկսեցին իրականացվել նաև կրթական ու մշակութային համակարգում: Դառնալով անկախ հանրապետություն՝ Արցախը նույնպես հնարավորություն ստացավ փոխել գոյություն ունեցող քաղաքական կարգը և ինքնուրույնաբար լուծել իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական, քաղաքական և կրթամշակութային հիմնախնդիրները: Խորհրդային Միության և Բաքվի իշխանությունների կողմից նպատակամետ պլանավորվող և վարչահրամայական մեթոդներով կառավարվող տնտեսությունից և քաղաքականացված կրթամշակութային համակարգից անցումն ազատականի արմատապես փոխեց ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այլ հրատապ խնդիր դարձրեց նոր ազգային կրթամշակութային համակարգի ստեղծումն ու զարգացումը, կառավարման նոր սկզբունքների, մեթոդների ու գործառույթների ապահովումը, դպրոցի և մշակութային բազմաթիվ օջախների՝ որպես կրթամշակութային համակարգի առաջնային օղակի զարգացումը:

Հարկ է նշել, որ այս գործընթացը դյուրին չէր ընթանում, քանզի, որպես կանոն, նորը հնի դեմ պայքարելով և նրանից դրականը վերցնելով ու բացասականը դեն նետելով է ինքնահաստատվում: Այս առումով թերևս առավել քան կարևորվում է խորհրդային հասարակարգի կրթական համակարգի և մշակութային կյանքի փորձը: Իր առանձնահատկություններով հանդերձ՝ այն ուներ ուսանելի դրսևորումներ, որոնք հաշվի առնելով, կարելի էր առավել արդյունավետ կերպով լուծել ներկայիս չափազանց հրատապ ու արդիական կրթական ու մշակութային հիմնահարցերը:

Անտարակույս, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և 21-րդ դարը մուտք գործած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) կրթամշակութային համակարգի միջև բովանդակային առումով կան որոշակի նմանություններ ու տարբերություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև Արցախյան շարժումը՝ 1986-1988թթ. ԼՂԻՄ-ի կրթական համակարգը ներառում էր 83 նախադպրոցական հիմնարկներ, որոնցում ընդգրկված էին 6650 երեխաներ: Հայկական և ռուսական շատ մանկապարտեզներ հասել էին մեծ նվաճումների մատաղ սերնդի դաստիարակության բնագավառում(ի հաստատումն ասվածի նշենք, որ Ստեփանակերտի թիվ 4 մանկապարտեզի փորձը ցուցադրվել էր ԽՍՀՄ ԺՏՆ ցուցահանդեսում ու արժանացել բրոնզե մեդալի): Մարզում գործում էին 6 պիոներական տներ, 4 մանկապատանեկան մարզական դպրոցներ: Ստեփանակերտում գործում էին նաև երաժշտական և շախմատի դպրոցներ, իսկ Հադրութում՝ մարզական դպրոց[1]:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 1986- 1988թթ. Լեռնային Ղարաբաղում գործում էին 161 հայկական դպրոցներ, որտեղ սովորում էին 29700 աշակերտներ, դասավանդում՝ 3268 ուսուցիչներ.[2]

Վերոհիշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ խորհրդային իշխանութ-

---

[1] «Կրթությունը և գիտությունը Արցախում», Եր. , 2005, էջ 104-105,Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթահամակարգը: (1991-2016թթ), հ. 3-րդ, Ստեփանակերտ, 2017, «Դիզակ Պլյուս» հրատ. , էջ 7:

[2] Նշվ. աշխ. , էջ 8:

յան տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողկրթության համակարգը գործել է կանոնավոր, և չնայած Բաքվի իշխանությունների հայահալած քաղաքականությանը, հայրենասեր մտավորականների ջանքերով կրթական համակարգում ձեռք են բերվել շոշափելի նվաճումներ:

Սակայն անժխտելի փաստ է, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադրբեջանին բռնակցելուց հետո՝ 70 տարի նրա ժողովուրդը ենթարկվել է ճնշումների, զրկանքների, ունեցել ազգային արժեքների կորուստ: Ղարաբաղում աննպաստ պայմաններ են ստեղծվել արցախահայության տնտեսության, մշակույթի, կրթական գործի ու լուսավորության զարգացման համար, և եթե միջոցներ են հատկացվել, ապա դրանք տրամադրվել են ղարաբաղաբնակ ադրբեջանցիների հոգևոր, մշակութային արժեքների, դպրոցի ու կրթական համակարգի զարգացման համար: Ամենևին չեն խրախուսվել հայկական հոգևոր արժեքները, մշակույթն ու դպրոցը:

Սակայն նույնիսկ այդպիսի ահավոր պայմաններում երկրամասի կրթական համակարգում նկատելի էին շոշափելի ձեռքբերումները: Անշուշտ, աներկբա է այն, որ արձանագրված առաջընթացը, ձեռքբերումներն ու նվաճումները տեղի են ունեցել մայր Հայաստանի ու Արցախի հայրենասեր մտավորականների համառ ջանքերի շնորհիվ:

ԼՂԻՄ-ի կրթական համակարգն Արցախյան շարժման տարիներին(1988-1991թթ.)՝ խորհրդային բանակի անօրինական ռազմական դրության պայմաններում, սումգայիթյան դեպքերից հետո սրվող հակամարտության, ադրբեջանցի ավազակախմբերի կողմից ծավալվող ռազմական գործողությունների պայմաններում ծանր փորձությունների ենթարկվեց:

Քննարկվող ժամանակաշրջանում (1988-1991թթ.)՝ պայմանավորված վերոնշյալ քաղաքական իրավիճակով և ռազմական գործողություններով ու այլ շարժառիթներով, որոշ չափով նվազել էր հանրակրթական դպրոցների և աշակերտների թիվը: Դպրոցների քանակը կրճատվել էր 161-ից՝ 156, աշակերտներինը՝ 29700-ից՝ 28554, ուսուցիչներինը՝ 3268-ից՝ 3189: Բավականին լուրջ դժվարություններ էին ստեղծվել շրջանների (շրջկենտրոնների), քաղաքների դպրոցներում ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու ուղղությամբ[1]:

Սակայն այդ տարիներին(1988-1991թթ.) Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կրթական համակարգը չընթացավ նախատեսված բարեփոխումների ուղղությամբ, այլ գերադասեց արագ վերակողմնորոշման ճանապարհը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1980-ական թթ.-ի վերջերին սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում ծավալվող իրադարձությունները հիմնականում կանխորոշեցին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հետագա հիմնահարցերը և սկիզբ դրեցին սոցիալ-մշակութային իրադրության, կրթական համակարգի փոփոխությունների տարերայնությանն ու անորոշություններին:

Առաջնորդվելով «Ազգային կրթությունը՝ ազգային լեզվով» նշանաբանով՝ ռուսաց լեզվով ուսուցմամբ դպրոցները զանգվածաբար անցան հայոց լեզվով ուսուցման: Այդ տարիներին հայտնվեցին առաջին մասնավոր դպրոցները (սկզբում՝ Հայաստանում, անկախությունից հետո՝ նաև Ղարաբաղում), ավելացավ, այսպես կոչված, հեղինակային դպրոցների քանակը, առաջ եկան նոր անվամբ կրթօջախներ՝ քոլեջներ (Հայաս-

[1] Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ. , էջ 10:

տանում՝ նաև գիմնազիաներ, ճեմարաններ), վարժարաններ: Այս բոլոր ձևափոխումների հիմքում ընկած էր որքան հնարավոր է շուտ կրթական հին համակարգից հրաժարվելու և արևմտյան ավելի ժամանակակից ու արդյունավետ թվացող մեթոդները ներդնելու ձգտումը:

Կրթական համակարգի բարեփոխումներն Արցախի Հանրապետությունում

Ժամանակագրական առումով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգի ձևավորման, վերափոխումների գործընթացն ու զարգացման ուղղությունները պետք է դիտարկել անցումային (1991-1995թթ.), կայունացման (1996-2002թթ.), կայացման (2002-2008թթ.) և արմատական վերափոխումների ու զարգացման (2008-2020թթ.) փուլերով[1]:

Անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հասարակական և սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց վերափոխումներ կատարվեցին նաև հոգևոր-մշակութային և հանրակրթության ոլորտում: Դա տեղի էր ունենում հայկական դպրոցներում 20-րդ դարավերջին մի շարք գործոնների ազդեցության տակ՝ ա)կրթական համակարգի (բոլոր ոլորտների) այն ժառանգությունը, որը Հայաստանն ու Արցախը ստացել էին հարուստ և ուսանելի անցյալից (նկատի ունենք նախախորհրդային և խորհրդային շրջանը), բ) բացառիկ մեծ նշանակություն ունեցավ Արցախի և Հայաստանի անկախացումը, որի շնորհիվ երկու հանրապետություններում մշակույթը, գիտությունը, նոր ձևավորված կրթական համակարգը՝ բոլոր ոլորտներում սկսում են զարգանալ իրար հետ փոխկապակցված և, ամենակարևոր, իրական վաղուց երազած մտահղացումները՝ Արցախի կրթամշակութային համակարգն ամբողջությամբ ներառվեց Հայաստանի կրթամշակութային համակարգի մեջ[2]:

Անկախությանը հաջորդած առաջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի և նրա անբաժան հատվածի՝ Արցախի տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև կրթության համակարգի վրա:

Անցումային փուլում ի հայտ եկան այնպիսի գործոններ, որոնք դանդաղեցրին և խոչընդոտեցին կրթական համակարգի բարեփոխումները և առաջընթաց զար- զարգացումը: 1.Ղարաբաղյան հակամարտության պատճառով դրությունն ավելի բարդացավ, երբ Ադր. ԽՍՀ-ում բնակվող շուրջ 350 հազար փախստական հայեր բռնագաղթվեցին Հայաստան, մի մասն էլ՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններ:

2.1991-1993թթ. իրադարձությունները՝ Խորհրդային Միության վերջնական փլուզումը, Հայաստանի և Արցախի անկախության հռչակումը, ռազմական դրությունը, հանրապետության շրջափակումը և նրա մի շարք բնակավայրերի հրթիռակոծումն ու ռմբակոծումները, նկուղային ծանր պայմանները, էներգետիկ ճգնաժամը և Ադրբեջան-արցախյան պատերազմի ծավալումը այլն:

Այդ ամենի հետևանքով վերոնշյալ ժամանակահատվածում զգալիորեն նվազեց ողջ կրթական համակարգի նյութական և տեխնիկական հագեցվածությունը: Հետին պլան մղվեցին կրթական և մշակութային խնդիրները, որի պատճառով ոլորտը հայտն-

---

[1] Տե՛ս Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ. , էջ 14:

[2] Նույն տեղում:

վեց ամենաթողության մթնոլորտում:

ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, որով հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվի հայկական դպրոցներում: 2005-2006 ուսումնական տարում ԼՂՀ-ում գործում էր 182 հանրակրթական դպրոց: Առաջնահերթ նշանակություն է տրվում սովորողների ազգային դաստիարակությանը, հասարակական ակտիվությանը, գիտելիքների, կարողությունների, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Պատմական Արցախը հայաթափ անելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տիրանալու գործընթացը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղի հայության բնաջնջումն էր: 1991թ. հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանի 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, դպրոցականներ, ուսուցիչներ: Պատանդ տարվեց ավելի քան 700 մարդ, որոնք կտտանքների ենթարկվեցին Ադրբեջանի բանտերում: Հազարավոր մարդիկ ստիպված եղան լքել իրենց պապենական բնօրրանը[1]: Սակայն պետք է նշել, որ չնայած տնտեսական, քաղաքական ծանր կացությանը, հանրապետության դպրոցները երբեք չեն դադարեցրել իրենց գոյությունն ու աշխատանքը: Արցախի ժողովուրդը, նրա մտավորականությունն ամեն ինչ անում էին կրթական օջախները պահպանելու համար:

Արցախյան պատերազմի տարիներին ամբողջովին ավերվել կամ լրջորեն վնասվել էր 110 դպրոցական շենք: Խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղում ստեղծված կրթական համակարգը պատերազմի հետևանքով խիստ թուլացել էր: Պատերազմի տարիներին լրջորեն տուժել էին նաև նախադպրոցական հիմնարկները, որոնց գործունեությունը դադարեցվել էր 1992թ.-ին[2]: 1990-1991թթ. 166 դպրոցներում սովորում էին 34654 աշակերտներ, դասավանդում՝ 3514 ուսուցիչներ, 1991-1992թթ. սովորում էին 25659 աշակերտներ, դասավանդում՝ 3350 ուսուցիչներ[3]:

Հարկ է նշել նաև այն իրական փաստը, որ Արցախյան պատերազմի դաժան օրերին հանրապետության դպրոցներում հնարավորինս կազմակերպվում էին ուսումնական պարապմունքները նկուղներում և վերաբնակեցված վայրերում գործող նորաբաց դպրոցներում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը բարձրացնելու կարևորագույն ձեռնարկներից մեկը հանդիսացավ վերաբնակեցված գյուղերի դպրոցները բարձրորակ մանկավարժական կադրերով ապահովելը, քանի որ ուսուցիչների զգալի մասը մասնակցում էր ազատագրական պայքարին, մի մասն էլ արտագաղթել էր Հայաստանի Հանրապետությունից այլ հանրապետություններ: Դպրոցներում լուրջ դժվարություններ էին ստեղծվել նաև ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ դասամատյանների, աշակերտական օրագրերի, հաշվապահական մատյանների, ուսումնական կաբինետների լաբորատոր սար-

---

[1] Վ. Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետական կերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 298-299:

[2] Հ. Աբրահամյան, Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008), Եր. , 2013, էջ 247, 248:

[3] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999, Ստեփանակերտ 2000, էջ 45:

քավորումների բացակայության պատճառով, քանի որ ռազմական գործողությունների ու ռմբակոծությունների հետևանքով լրիվ ավերվել էին դպրոցական շենքերը:

Վերոնշյալ և այլ բնույթի հարցերին արագ լուծում տալու և երկրի համար այդ ծանր վիճակում հանրակրթական դպրոցներում ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով հրավիրվեց նորանկախ Արցախի Հանրապետության ուսուցիչների առաջին ընդհանուր խորհրդակցությունը (1991-1992 ուս. տարվա համար օգոստոսի 24-26-ին), որին մասնակցում էին ԼՂՀ կրթության բաժնի վարիչ Վիգեն Հայրապետյանը (կրթության մարզային բաժինը ղեկավարել է 1986թ. մինչև 1992թ. վերջը), ՀՀ կրթության, գիտության նախարարության ներկայացուցիչներ, հանրապետության վաստակաշատ մանկավարժներ, շրջանային, քաղաքային կրթության բաժինների վարիչներ, Արցախյան շարժման գործիչներ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին պատգամավոր-ուսուցիչներ և Արցախյան շարժման ակտիվիստներ[1]:

Խորհրդակցությունում հանրապետության կրթության բաժնի վարիչը հանձնարարականներ տալով շրջանային կրթության բաժինների վարիչներին՝ միաժամանակ մատնանշեց. «Ինչպես գիտենք, Արցախյան պատերազմի ժամանակ հանրապետության տարածքում մեծ մասամբ ավերվել են բնակելի, դպրոցական շենքեր, ստեղծվել են անբարենպաստ պայմաններ, սակայն բոլորիս առաջնահերթ խնդիրն է համախմբել մանկավարժական կոլեկտիվները և ներգրավել ուսումնական աշխատանքի մեջ՝ նրանց համար ստեղծելով համեմատաբար նպաստավոր պայմաններ, ուսումնական պարապմունքները հնարավորինս կազմակերպել հարմարեցված շենքերում, միաժամանակ՝ հավաքագրել ցիրուցան եղած աշակերտական կազմը և ընդգրկել պարապմունքներին: Իսկ որոշ դպրոցներում պահպանված ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի մի մասը (դասամատյաններ, ուսումնական ծրագրեր, պլաններ, դիտազննական պարագաներ, լաբորատոր սարքավորումներ, դպրոցի ներքին կյանքին առնչվող այլ իրեր) տրամադրել բռնագաղթված գյուղերի վերաբացված դպրոցներին»[2]:

Պատերազմական գործողությունների հետևանքով հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում, առավել ևս՝ կրթական համակարգում, չնայած ստեղծվել են մեծ դժվարություններ, հատկապես՝ 1992-1993թթ., այնուհանդերձ, չէին կարող թեկուզ որևէ չափով դպրոցներում անուշադրության մատնել ուսումնական պարապմունքների կազմակերպումը կամ կրճատել ուսումնական ծրագրերն ու պլանները, կամ թույլ տալ, որ թերակատարվեն ծրագրային նյութերը:

ԼՂՀ կառավարության ԿԳՄՍ նախարարության կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ ժողտնտեսության, մշակութային հիմնարկների, հանրակրթական դպրոցների, ուսումնական հաստատությունների և այլ ոլորտների աշխատանքների վերականգնման անհետաձգելի միջոցառումների վերաբերյալ: Այդ միջոցառումների ընդհանուր համակարգում կարևոր օղակ հանդիսացավ 1994թ. մայիսի 16-ին ԼՂՀ կառավարության ընդունած (N 47) որոշումը, որով նախատեսվում էր ոչ միայն վերականգնել, այլև՝ զգալի չափով գերազանցել տնտեսության, մշակույթի և կրթության բոլոր բնագավառների նախապատերազմյան մակարդակը: Ընդ որում, առավել մեծ ուշադրություն էր դարձվում նաև մշակույթին և հանրակրթության ոլորտին: Նախատեսվում էր ոչ միայն

---

[1] Տե՛ս Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ. , էջ 18:

[2] Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան, նշվ. աշխ. , էջ19:

վերականգնել պատերազմի ժամանակ կրթական հաստատությունների, մշակութային օջախների շենքերը, այլև՝ զգալիորեն ընդարձակել դպրոցների ցանցը և ավելացնել նրանցում սովորողների թիվը [1]:

ԼՂ Հանրապետության ուսուցիչների խորհրդակցությունում (1994-1995 ուս. տարվա օգոստոսի 22-24-ին) ունեցած իր ելույթում ԼՂՀ ԿԳՄՍ նախարար Նելլի Ոսկանյանը՝ ներկայացնելով հետպատերազմյան շրջանի առաջին ուսումնական տարում հանրակրթության ոլորտում տարվող լայնածավալ աշխատանքները (դպրոցական ցանցի ընդլայնում, շենքերի վերանորոգում, ուսուցիչների, աշակերտների համակազմի աճ, որոշ չափով ուսումնանյութական բազայի ապահովում, դասարանների կահավորում՝ նստարաններ, գրատախտակներ և այլն) մատնանշեց, որ հանրապետությունում սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց առավել փոփոխություններ են կատարվել նաև հանրակրթության ոլորտում: Այսպես, դպրոցների թիվն ավելացնելու նպատակով կառավարությունն անհրաժեշտ միջոցներ է տրամադրել, առանձնապես ուշադրություն դարձրել 8-ամյա և միջնակարգ դպրոցների թիվը ավելացնելու վրա[2]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետպատերազմյան շրջանում՝ 1994-1995թթ., մեծ առաջընթաց է նկատվել հանրակրթության ոլորտում: Ընդարձակվել է հանրակրթական դպրոցների ցանցը, ինչպես նաև՝ ավելացել ուսուցիչների և սովորողների քանակը: Այսպես, օրինակ, եթե 1993-1994 ուս. տարում հանրապետությունում գործում էր 130 դպրոց՝ 19366 սովորողների ընդգրկմամբ, դասավանդում էր 2427 ուսուցիչ, ապա 1994-1995 ուս. տարում դպրոցների թիվը հասավ 148-ի, սովորողներինը՝ 20510-ի, ուսուցիչներինը՝ 2735-ի[3]:

Հանրապետության 106 միջնակարգ դպրոցներում նախադպրոցական խմբերի թիվը 1998-1999 ուս. տարում 345 էր: Հանրապետության 6 մանկական ստեղծագործական կենտրոններում գործում էին 213 խմբեր՝ ավելի քան 2 հազար սովորողների ընդգրկմամբ, այդ թվում՝ Ստեփանակերտում՝ 68 խումբ, Ասկերանի շրջանում՝ 25, Մարտակերտի շրջանում՝ 50, Մարտունու շրջանում՝ 20, Հադրութի շրջանում՝ 20, Շուշիի շրջանում՝ 30[4]:

Եթե 1998-1999 ուս. տարում հանրապետությունում գործել են 106 միջնակարգ դպրոցներ, ապա 1999- 2000թթ.՝ 108: Ստեփանակերտի թիվ 6 և Մարտակերտի շրջանի Կիչանի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը վերակազմավորվել էին միջնակարգի, Ծաղկաշենի (Ճանկաթաղ) մեծագույն ոչ լրիվ միջնակարգ դպրոցը՝ տարրականի, Մարտունու շրջանի Ղավախանի մասնաճյուղը՝ տարրական դպրոցի, իսկ Ասկերանի շրջանի Հովսեփավան գյուղում բացվել էր տարրական դպրոց[5]:

ԼՂՀ-ում կրթական համակարգը ներառում է. կրթության ամբողջ մակարդակը՝ նախադպրոցականից մինչև հետբուհական շրջան, որը լիովին ֆինանսավորվում էր պետական բյուջեով:

ԼՂ Հանրապետության կրթական համակարգի բարեփոխումների ընթացքի վրա

---

[1] Նույն տեղում, էջ 21:
[2] Նույն տեղում, էջ 23:
[3] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 1995-1999, էջ 45:
[4] «Լուսարար», 1999, հ.1, 1 սեպտեմբերի:
[5] Նույն տեղում:

հատկապես բացասաբար էին անդրադարձել ԼՂՀ կառավարության 1995-1998թթ. ընդունած մի քանի որոշումներ: Դեռևս 1992թ. միանգամից բոլոր նախադպրոցական հիմնարկները փակվեցին, որով փաստորեն կրթական ծրագրի ընդհանուր շղթայից անջատվեց նախադպրոցական կրթությունը: ԼՂՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 10-ի «Համայնքի սեփականության գույքը սահմանելու մասին» թիվ 227 որոշման համաձայն՝ ԼՂՀ պետական հանրակրթական դպրոցներն ընդգրկվեցին համայնքի սեփականության գույքի ցանկում[1]: Ընդունվեցին նաև նշված որոշումից բխող մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնք պետք է ապահովեին հանրակրթական դպրոցների գործունեությունը: Սակայն անցած մի քանի ամիսները վկայեցին, որ նման որոշումը ժամանավրեպ է և հազիվ թե կարողանար իրեն արդարացնել՝ ելնելով մի շարք հանգամանքներից. Առաջին՝ նշված ժամանակաշրջանում գյուղական համայնքները դեռևս ինքնուրույն, կայացած համարել չէր կարելի, երկրորդ՝ գյուղապետարանները չունեին համապատասխան մասնագետներ, որոնք կարողանային իմանալ դպրոցը, օժանդակել նրան ու վերահսկել նրա գործունեությունը: Երրորդ՝ կրթության բովանդակության միասնականությունը ապահովում էր ԿԳ նախարարությունը շրջանային վարչակազմերի կրթության բաժինների միջոցով: Ինքնըստինքյան դպրոցի համար վերադաս մարմին էր դառնում կրթության բաժինը, և դպրոցը հայտնվել էր «երկու տիրոջ ծառայի» կարգավիճակում, որոնց որոշումները հնարավոր էր նույնիսկ իրարամերժ լինեին: Ուստի նպատակահարմար էր դպրոցը թողնել կրթության բաժինների ենթակայության տակ:

Սա թե ինչու կառավարության առաջ կրթության նախարար Համլետ Գրիգորյանը հարց դրեց վերացնել այդ թյուրիմացությունը և դպրոցները հանել գյուղապետարանների ենթակայությունից: Եվ ահա 1999թ. դեկտեմբերի 10-ի ԼՂՀ կառավարության որոշումով հանրապետությունում գյուղական դպրոցները հանվեցին գյուղական համայքների սեփականության գույքի ցուցակից և հանձնվեցին շրջանային կրթության բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը:

Ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման գործում մի նոր էջ գրեց Արցախի պետական համալսարանը: 1969 թ. Ադրբեջանի կառավարության որոշմամբ փակվեց Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը և տեղափոխվեց Ստեփանակերտ, սակայն, արդեն երեք բաժիններով՝ հայկական,ադրբեջանական և ռուսական: Փաստորեն, դա նշանակում էր հայաշունչ Բաքվից օտարել հայոց լեզուն, իսկ Արցախում նախադեպ ստեղծել ադրբեջաներենի մասսայականացման և ազերի մտավորականության արմատավորման համար: Նման ձևով հիմնվեց Ադրբեջանի Վ. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը: Դրա հիման վրա 1974 թ. ստեղծվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Արցախյան շարժման տարիներին՝ 1989 թ. այն դարձավ Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունք: Ղարաբաղյան պատերազմի թեժ պահին՝ 1992 թ. հոկտեմբերի 16-ին արցախահայությունը, հավատարիմ իր լավագույն ավանդույթներին, վերոհիշյալ բուհի և Հայաստանի ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի հիմքերի վրա հիմնադրեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը: 1995 թ. բուհը վերանվանվեց Արցախի պետական համալսարանի: 2008 թ. ԱրՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետի հիմքերի վրա բացվեց ՀՀ գյու-

[1] Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 248:

դատնտեսական ակադեմիայի Ստեփանակերտի մասնաճյուղը: Ստեփանակերտում գործում են նաև մասնավոր ԲՈՒՀ-եր[1]:

Արդեն 1999թ. Արցախում կար 7 բուհ՝ 2430 ուսանողներով: Դրանցից միայն մեկն էր պետական: Այդ ժամանակ Արցախում գործում էր չորս պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ 1266 սովորողներով[2]: Արցախում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բակալավրի դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի ծրագրերով: Թե՛ պետական և թե՛ մասնավոր բուհերում գոյություն ունեն առկա և հեռակա ուսուցման ձևեր, որոնք գործում են անվճար և վճարովի հիմունքներով: Այստեղ ևս հետբուհական կրթության համակարգում գործում է ասպիրանտուրա:

Պատերազմական գործողությունները դադարացվելուց հետո սկսեցին վերականգնվել դպրոցական շենքերը: Սակայն այդ գործընթացը բավականին դանդաղ էր ընթանում, նախ՝ պետական միջոցների, ապա՝ մասնավորների ներդրումները բավարար չլինելու պատճառով:

2002 թ. մայիսի վերջին Երևանում տեղի ունեցած «Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ համաժողովը հաստատեց առաջիկա 3 տարում Արցախի Հանրապետությունում դպրոցների հիմնանորոգման համալիր ծրագիր: Դրանից հետո միայն աշխուժացան դպրոցների վերանորոգման, նորերի շինարարության, դպրոցների նյութատեխնիկական բազան համալրելու աշխատանքները: 2000 թ. ապրիլի 4-ին ընդունվեց ԼՂՀ «Կրթության մասին» օրենքը, որի մեջ հետագայում՝ մինչև 2008 թվականը, կատարվեցին մի շարք լրացումներ և փոփոխություններ: Այդ օրենքով Արցախում կրթական համակարգը դրվեց նոր հիմքի վրա: Հաստատվեցին կրթության մակարդակները, չափորոշիչները, նպատակները, մշակվեց կրթության համակարգի պահպանման և զարգացման 2001-2005 թթ. ծրագիրը: Այդ օրենքը դարձավ կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը: Օրենքը նպաստեց հանրապետությունում աշխուժացնել դպրոցական կյանքը և նպաստեց ուսումնական որակի բարձրացմանը: Եթե հանրապետությունում 2001-2009 ուս. տարում հանրակրթական դպրոցների թիվն աճել էր 24-ով՝ 212-ից դառնալով 236, ապա սովորողների թիվը պակասել էր 2655-ով՝ 23468-ից դառնալով 20813, որը բացատրվում էր ծնելիության նվազումով և միգրացիայով, երբ մեկնող ամուսինների հետ գնացել էին նրանց դպրոցահասակ երեխաները: Մնացած բնագավառներում, անշուշտ, առաջընթաց կար: Օրինակ՝ այդ ժամանակաշրջանում բուհերում սովորողների թիվն աճել է 3099-ով, որից 2380-ը բաժին է ընկնում Արցախի պետական համալսարանին[3]:

2004-2005 ուսումնական տարվանից ԼՂՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսական ծրագրերով:

---

[1] Ա. Ավանեսյան, Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ. , 2011, էջ 68,72:

[2] Վ. Բալայան, Արցախի պատմությունը, հնադարից մինչև մեր օրերը՝ Եր. , 2011, էջ 280:

[3] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. գործող օրենքների ժողովածու (1994-2001) Ստեփանակերտ, 2002, էջ 735-749:

2010-2011 ուս. տարվա դրությամբ ԼՂՀ-ում բուհերի թիվը հասնում էր 7-ի, որից 2-ը՝ պետական, 5-ը՝ ոչ պետական: Ուսանողների թիվը բուհերում հասնում էր 6096-ի: Պետական միջին մասնագիտական հաստատություններում (5) սովորողների քանակը հասնում էր 1619-ի:

Դատելով մամուլում հրապարակված նյութերից, Ազգային ժողովի նստաշրջաններում և կառավարության նիստերում տեղի ունեցած քննարկումներից՝ հանրապետությունում կրթական մակարդակը դեռևս ցածր մակարդակի վրա էր, չնայած այդ ուղղությամբ քիչ աշխատանքներ չէին տարվել: Հանրապետությունում գործում է ուսուցիչների որակավորման ինստիտուտը, որտեղ ուսուցիչները որակավորվում են: Ամենից առաջ անբավարար էր ֆինանսավորումը, որը կազմում էր ընդհանուր բյուջեի մոտ 15.5 տոկոսը: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2000-2008 թթ. կրթությանը և գիտությանը հատկացվել է նվազ չափի գումար [1]:

Բերված տվյալները համոզում են, որ 9 տարում կրթության և գիտության ուղղությամբ կատարված ծախսերը, ընդհանուրի համեմատ, նկատելի բարձրացում չեն ունեցել, նույնիսկ 2000 թ. համեմատ 2008 թ. այն իջել է 1.3 տոկոսով[2]: Կրթական հարցերով զբաղվող հեղինակներից ոմանք այն կարծիքին են, որ այդ տարիներին ոչ միայն իջել է ուսուցչի սոցիալական կարգավիճակը, այլև ընկել է նրա վարկանիշը հասարակական կյանքում: Չէ՞ որ շատ կարևոր է դպրոցի դերակատարությունն ազգային և համամարդկային արժեքներ կրող հանրապետության քաղաքացու ձևավորման գործում: Որ խախտվել էր դպրոց-ընտանիք և հասարակություն կապը, դա անառարկելի էր: Այդ երևույթի դեմ ոչ միայն Արցախում, այլև՝ Հայաստանի Հանրապետությունում տարվող պայքարը քիչ էր, արդյունավետ: Դպրոցներում ուսման որակը, մանավանդ՝ կարգապահությունը, պատշաճ հիմունքների վրա չէր գտնվում:

Երբ ԼՂՀ ԱԺ նստաշրջանում քննարկվում էր 2008 թ. բյուջեի ընդունման հարցը, հանրապետության ֆինանսների նախարար Սպարտակ Թևոսյանն իր զեկուցման մեջ շեշտեց, որ կրթության ոլորտում հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը կբարձրացվի 21 տոկոսով և միջին ամսական աշխատավարձը կկազմի 85.7 հազար դրամ: Աշխատավարձերը կբարձրացվեն նաև նախադպրոցական հիմնարկներում: Նախարարը նաև շեշտեց, որ կրթության համակարգում առաջին անգամ պետբյուջեով դպրոցների աշակերտները 100 տոկոսով կապահովվեն դասագրքերով, որի համար հատկացվել է 132.1 մլն դրամ: Նաև նշեց, որ պետական և ոչ պետական բուհերում ու միջին մասնագիտական հաստատություններում սովորող զոհված զինծառայողների, Արցախյան պատերազմի առաջին կարգի հաշմանդամների և ծնողազուրկ երեխաների ուսման վճարները կփոխհատուցվեն պետության կողմից, դրա համար նախատեսված է 37.4 մլն դրամ: Առաջին անգամ ռազմամարզական ճամբարներում աշակերտների հանգիստը կազմակերպելու համար նախատեսվել էր 19.4 մլն դրամ[3]:

Արցախի ուսումնական հաստատությունների վերանորոգման և նորերի շինարա-

---

[1] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006, էջ 45-53, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, էջ 82-93:

[2] ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2006, էջ 168-169, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, էջ241-242 :

[3] Նույն տեղում, էջ 253:

ության գործում կարևոր դեր ունեն նաև բարեգործական ընկերություններն ու անհատ ձեռներեցները: Օրինակ՝ ՀՕՄ-ի հովանավորությամբ մանկապարտեզներ բացեցին Ասկերանի շրջանի Այգեստան և Մարտունու շրջանի Ավդուռ գյուղերում: Այդ կազմակերպության օգնությամբ զոհված ազատամարտիկների երեխաների համար մանկապարտեզ է բացվել նաև Ստեփանակերտ քաղաքում»[1]: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով շահագործման է հանձնվել Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի համալիրը՝ իր ուսումնական և հանրակացարանային շենքերով, համակարգիչներով, այլ կահավորանքներով: Հիմնադրամը դպրոցական նոր շենք է կառուցել Վաղուհասում[2]: Մարտակերտի շրջանի Չլդրանի դպրոցը վերակառուցվել է ժնևից՝ Տիգրան Իզմիրյանի ներդրած միջոցներով»[3]: Արցախում դպրոցաշինության գործում էական ներդրում է ունեցել Թեհրանի հայոց թեմական խորհուրդը, որն այդ նպատակով հատկացրել էր 125 հազար ամերիկյան դոլար: 2002 թ. վերոհիշյալ խորհուրդը սկսել է 5 կրթօջախների՝ Շահումյանի շրջանի Հավսաթաղի, Նոր Էրքեջի, Մարտակերտի շրջանի Մեծ Շենի, Շուշիի շրջանի Լիսագորի և Ասկերանի շրջանի Սարուշենի դպրոցների շինվերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվել էին ծրագրված ժամկետում[4]: Անմխիթար վիճակում էր գտնվում Մարտակերտի շրջանի Վանքի 120-ամյա պատմություն ունեցող դպրոցական շենքը, որտեղ սովորում էր 250 աշակերտ և աշխատում 31 ուսուցիչ: Համանման խարխուլ վիճակում էր գտնվում նաև նույն շրջանի Հաթերքի Բարմեն Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը: Այդ և հանրապետության տասնյակ բնակավայրերի դպրոցական շենքերի վերանորոգումն ու նորերի շինարարությունը դարձել էին անհետաձգելի խնդիր: Բարերարների միջոցներով դպրոցական շենքեր կառուցվեցին Մարտունու շրջանի Հերհեր և Շեխեր գյուղերում, վերանորոգման ենթարկվեց նույն շրջանի Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը և այլն: Արցախի իշխանությունները մտահոգված են հանրապետության ուսումնական բոլոր հաստատությունները բերել տանելի վիճակի: Ելնելով այդ կարևոր խնդրից այդ նպատակին են ուղղվում ոչ միայն պետական, այլև՝ անհատական ձեռներեցների և հասարակական կազմակերպությունների միջոցներ:

ԼՂՀ կառավարությունն այդ ժամանակաշրջանում բազմաթիվ որոշումներ է ընդունել «Տարվա լավագույն դպրոց» և «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթներում հաղթողներին պարգևատրելու վերաբերյալ[5], հաստատել է ԼՂՀ գիտամանկավարժական կադրերին գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհելու կարգի մասին կանոնադրությունը[6], 2007 թ. հոկտեմբերի 19-ին որոշում է ընդունել ԼՂՀ դպրոցականներին անվճար դասագրքերով ապահովելու մասին[7], 2003 թ. նոյեմբերի 28-ին հաստատել է «Գիտության, կրթության, ժուռնալիստիկայի, մշակույթի, արվեստի, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվավոր կոչումների արժանացած անձանց

---

[1] Նույն տեղում, «Երկիր», N 30, 24. 05. 2000:
[2] «Ազատ Արցախ», թիվ 60, 23. 05. 2002:
[3] Նույն տեղում, թիվ 123, 19. 10. 2002:
[4] Նույն տեղում, թիվ 141, 30. 11. 2002:
[5] Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 254:
[6] Նույն տեղում, որոշում թիվ 108, 6.05.2002, Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 255:
[7] Նույն տեղում, որոշում թիվ 435, 19.10.2007, Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:

պատվոգրերի, կրծքանշանների, ինչպես նաև՝ պատվավոր կոչումները հաստատող վկայականների ձևերը հաստատելու մասին[1]: Դեռևս 1999 թ. նոյեմբերի 10-ին հաստատվել է օրենք՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվավոր կոչումների մասին, որը սահմանվել է տնտեսության, գիտության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի, արվեստի բնագավառներում[2]: Կառավարության որոշումով ստեղծվել է ԼՂՀ բնակավայրերի տեղանվանական հանձնաժողով[3], իսկ 2005 թ. մայիսի 24-ին որոշում է ընդունվել «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի նշանակման և վճարման կարգն ու չափը սահմանելու մասին»[4] և այլն:

Արցախի կառավարությունը ներդրումներ է կատարում նաև գիտության զարգացման ուղղությամբ: 2007 թ. կառավարության որոշումով ստեղծվել է Արցախի գիտության կենտրոն, որի ջանքերն ուղղված են հանրապետությունում բնական և հասարակական գիտությունների զարգացմանը: Այդ կենտրոնում միավորված են տասնյակ մասնագետներ: Կենտրոնի յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանները և ֆինանսական միջոցների ծախքը հաստատվում է ԼՂՀ կառավարության կողմից:

Վերջաբան

Այսպիսով՝ համազգային շարժման տարիներին, հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին հաղորդակից լինելով, Հայաստանի և Արցախի կրթական և մշակութային հաստատությունների ներքին կյանքում համեմատաբար որոշակի փոփոխություններ կատարվեցին՝ նախորդ համակարգում եղած դրականը պահպանելու սկզբունքից ելնելով, ներդնելով ազգային տարրերը և ձերբազատվելով այն ամենից, ինչն արգելակում էր կրթական համակարգի բնականոն զարգացումը: Իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության և Արցախի նորաստեղծ հանրապետության կրթամշակութային համակարգը, լինելով խորհրդային համակարգի ժառանգորդը, թևակոխեց անցումային փոփոխությունների դժվարին, իսկ զինադադարից հետո(1994թ.), հանրապետությունում ընթացող տնտեսական տեղաշարժերին զուգընթաց, զարգացման նոր փուլ:

Անկախացումից հետո Հայաստանը (1991թ. սեպտեմբերի 21) և Արցախի նորաստեղծ հանրապետությունը լայն հնարավորություն ստացան միասնաբար լուծելու իրենց առջև ծառացած տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական հիմնախնդիրները: ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, որով հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվի հայկական դպրոցներում: 2005-2006 ուսումնական տարում ԼՂՀ-ում գործում էր 182 հանրակրթական դպրոց: Առաջնահերթ նշանակություն էր տրվում սովորողների ազգային դաստիարակությանը, հասարակական ակտիվությանը, գիտելիքների, կարողությունների, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

---

[1] Նույն տեղում, որոշում թիվ 352, 28.11.2003, Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
[2] ՀՕ-70, 10.11.1999:
[3] Նույն տեղում, որոշում թիվ 435, 19.10.2007, Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., նույն տեղում:
[4] Հ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 255:

2020 թ. -ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմն ակնհայտորեն ուղղված էր ոչ միայն քաղաքացիական բնակչության վերացմանը, այլև՝ այդ տարածքի մշակութային ժառանգության, մշակութային և կրթական հաստատությունների դեմ: Հարկ է նշել, որ մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացումը պատերազմական գործողությունների ժամանակ և հետո միջազգային մի շարք կոնվենցիաներով և հռչակագրերով որակվում է որպես պատերազմական հանցագործություն: Նշվածի ամենահայտնի օրինակը Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու ռմբակոծումն էր, որի վրա 2020 թվականի հոկտեմբերի 8-ին երկու արկ էր պայթել: Ավելի վաղ ռմբակոծվել էր նաև Շուշիի Մշակույթի և երիտասարդության կենտրոնը, որը վերանորոգումից հետո վերաբացվել էր 2017 թվականին[1]:

Մինչև Արցախյան 44-օրյա պատերազմն Արցախի Հանրապետությունում գործում էին՝ 2 պետական թատրոն, 1 կամերային պետական նվագախումբ, 2 կամերային պետական երգչախումբ, 1 մանկապատանեկան և երիտասարդական պետական երգչախումբ, 1 ազգային նվագարանների պետական նվագախումբ, 3 պետական համույթներ, 1 ժողգործիքների համույթ (Բերձոր), 1 պետական ջազ նվագախումբ, 1 երաժշտական դպրոց, 11 արվեստի դպրոց, 1 մշակույթի և երիտասարդության պալատ, 1 մարզամշակութային պալատ, 1 մշակույթի կենտրոն, 6 մշակույթի և երիտասարդության կենտրոն, 1 արվեստի միություն, 183 ակումբներ, որոնցից 113-ն ունեցել են շենք: Կազմվել են Արցախի Հանրապետության պատմա-մշակութային անշարժ ժառանգության ցանկը և դրանց զգալի մասի անձնագրերը, որոնք ընդգրկում են ավելի քան 4000 միավոր, շուրջ 1500 հուշարձանների պահպանական գոտիներ[2]:

Համաձայն Արցախի ԿԳՄՄՆ-ի տրամադրած տվյալների՝ նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրի ստորագրումից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել թվով 12 թանգարաններ՝ 19485 ցուցանմուշով[3], մոտ 2000 հուշարձան, այդ թվում՝ վանքեր և եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր, դամբարաններ, գերեզմանոցներ, սրբավայրեր, բերդեր, ամրոցներ, ապարանքներ, այլ հուշարձաններ, շուրջ 230 կրթական հաստատություններ, այդ թվում՝ դպրոցներ, արվեստի և սպորտի կենտրոններ, մշակույթի տներ և ակումբներ, ուսումնական այլ հաստատություններ:

Ադրբեջանական վերահսկողության տակ անցած տարածքներում հուշարձանների և մշակութային-կրթական հաստատությունների հանդեպ վանդալային գործողությունները դարձել են ավելի ինտենսիվ: Դրա վկայություններն են սոցիալական կայքերում ադրբեջանցի օգտատերերի կողմից պարբերաբար տեղադրվող տեսանյութերը, որտեղ ադրբեջանական կողմը ոչնչացնում, աղավաղում և անարգում է հայկական մշակութային արժեքները:

Թեև ՀՀ և ԱՀ պետական մարմինները, քաղաքացիական հասարակությունը, գիտնականները և մտավորականները պարբերաբար բարձրացնում են հայ մշակութային ժառանգության գոյութենական խնդիրները միջազգային հանրությանը և մշակութապահպան կազմակերպություններին, բայց հիմնականում, կարող ենք փաստել, որ մի-

---

[1] Հ. Պետրոսյան, Հ. Մուրադյան, Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան, 2022, էջ 33:
[2] Նույն տեղում, էջ 26
[3] Նույն տեղում, էջ 35:

ջազգային կառույցները բացի մտահոգություն հայտնելուց, կոնկրետ քաղաքական քայլեր չեն իրականացնում և լուծումներ չեն փնտրում Արցախի մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ:

Այսպիսով՝ Արցախի մշակութային ժառանգության բռնայուրացումն Ադրբեջանի իշխանությունների կողմից մշակված, լուրջ մասնագիտական և ֆինանսական ռեսուրսներ ներառող, միջազգայնորեն իրականացվող քաղաքականություն է: Դրա դեմ տարվող քաղաքականությունն էլ պետք է ունենա հայկական երկու պետությունների փոխհամաձայնեցված, լուրջ ռեսուրսահեն քաղաքականություն: Այսպիսով՝ Արցախի մշակութային ժառանգության պահպանությունն այսօր առաջնային մարտահրավերներից մեկն է ինչպես Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության, անպես էլ աշխարհասփյուռ հայության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008), Երևան, 2013, էջ 247, 248:
2. Ավանեսյան Ա, Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ. , 2011, էջ 68,72:
3. Ավանեսյան Գ., «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2005, էջ 104-105:
4. Բալայան Վ., Արցախի պատմությունը՝ հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 280:
5. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետական կերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 298-299:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. գործող օրենքների ժողովածու (1994-2001) Ստեփանակերտ, 2002, էջ 735-749:
7. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1999, Ստեփանակերտ, 2000:
8. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006, Ստեփանակերտ, 2000:
9. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008, Ստեփանակերտ, 2000:
10. Հարությունյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթահամակարգը (1991-2016թթ), հ. 3-րդ, Ստեփանակերտ, 2017, «Դիզակ Պլյուս» հրատ. , էջ 7:
11. Պետրոսյան Հ.,Մուրադյան Հ. , Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Երևան, 2022, էջ 33:

REFERENCES

1. Abrahamyan H, Ler'nayin Gharabaghi hanrapetut'yun. social-tntesakan, hasarakakan-qaghaqakan ev mshakut'ayin kyanqy' (2000-2008) (Socio-economic, Socio-political and cultural life (2000-2008)), Er., 2013, e'j 247, 248. (in Armenian)
2. Avanesyan A, Arcaxi gitakrt'akan hamakarg. kayacman y'nt'acq, zargacman mitumner (Scientific and educational system of Artsakh: the course of formation, development

trends), Step'anakert, «Dizak plyus» hrat., 2011, e'j 68,72. (in Armenian)
3. Avanesyan, G. <<Krt'ut'yuny' ev gitut'yuny' Arcaxum>> (Education and Science in Artsakh), Er., 2005, e'j 104-105. (in Armenian)
4. Balayan V, Arcaxi patmut'yuny', hnadaric minchev mer orery (History of Artsakh, from antiquity to the present day) Er., 2011, e'j 280. (in Armenian)
5. Balayan V, Drvagner arcaxahayut'yan azatagrakan payqari ev petakan kertman patmut'yan (Episodes of the history of the liberation struggle and state-building of the Armenians of Artsakh), Step'anakert, 2012, e'j 298-299. (in Armenian)
6. Harut'yunyan A., Ler'nayin Gharabaghi hanrapetut'yan krt'ahamakargy': (1991-2016t't') (The education system of the Nagorno-Karabakh Republic. (1991-2016)), h. 3-rd, Step'anakert, 2017, «Dizak Plyus» hrat., e'j 7. (in Armenian)
7. Ler'nayin Gharabaghi Hanrapetut'yun. gorc'ogh o'renqneri jhoghovac'u (1994-2001) (The Nagorno-Karabakh Republic. collection of current laws (1994-2001)) Step'anakert, 2002, e'j 735-749. (in Armenian)
8. LGhH vitwakagrakan taregirq (Statistical Yearbook of the NKR) 2000-2006, Step'anakert 2000. (in Armenian)
9. LGhH vitwakagrakan taregirq (Statistical Yearbook of the NKR) 2002-2008, Step'anakert 2000. (in Armenian)
10. LGhH vitwakagrakan taregirq (Statistical Yearbook of the NKR) 1995-1999, Step'anakert 2000. (in Armenian)
11. Petrosyan H,Muradyan H., Arcaxi mshakut'ayin jhar'angut'yuny' hard'akumneri t'iraxum (Cultural heritage of Artsakh under the gun of attacks), Er., 2022, e'j 33. (in Armenian)

РЕЗЮМЕ

Образовательная жизнь Арцаха в 1991-2020 гг.

Эдик Минасян

доктор исторических наук, профессор

Декан факультета истории ЕГУ

Ключевые слова: Республика Арцах, Республика Армения, Азербайджанская Республика, образовательные преобразования, культурная жизнь, школы, дошкольное образование, Арцахский государственный университет, газеты, журналы, библиотека, театр, архитектура и скульптура, образовательные и культурные центры.

В статье анализируются пресса, архивные материалы, опубликованная литература и факты, показана героическая борьба армян Арцаха за преодоление многих препятствий в тяжелых условиях войны в Арцахе, что делает упор на культурно-просветительскую жизнь. В результате, благодаря стойкости армян Арцаха не только были сохранены успехи, достигнутые в образовательной и культурной жизни, но и благодаря преобразованиям мы увидели новые события в конце XX века и за период двух десятилетий 21 века.

Став независимой республикой, Арцах также получил возможность изменить существующий политический порядок, самостоятельно решать социально-экономические, образовательные и культурные проблемы. После провозглашения НКР начались реформы в сфере общего образования. По примеру Республики Армения были разработаны принципы

создания национальной школы, составлены новые образовательные программы и учебники. Национальное Собрание НКР приняло закон, согласно которому обучение армянских детей должно проходить в армянских школах. Приоритет отдавался национальному воспитанию учащихся, общественной активности, формированию и развитию знаний, умений и творческих способностей. Хронологически рассмотрен процесс становления и преобразования системы образования Республики Арцах и направления развития на этапах перехода (1991-1995 гг.), стабилизации (1996-2002 гг.), становления (2002-2008 гг.), радикальных преобразований и развития (2008–2020 гг.). Фактически образовательно-культурная система Арцаха была полностью включена в образовательно-культурную систему Армении, интегрирована в нее. Многочисленные факты свидетельствуют об успехах, достигнутых в послевоенный период в области расширения сети средних школ, увеличения числа учителей и учащихся, повышения качества общего образования. Сравнительный анализ статистических данных показывает масштабное строительство школ на освобожденных территориях НКР, в том числе в столице, с помощью инвестиций армянских благотворительных организаций и отдельных благотворителей, строительство новых образовательных и культурных центров, появление новых издательств, СМИ, расширение библиотечной сети, музеев, домов-музеев выдающихся деятелей, научных, культурных, этнографических центров, музыкальных школ, театральных студий, актерских школ, создание архитектурно-скульптурных комплексов и т.д. При этом используются законы и законодательные акты, принятые Правительством Арцаха, регулирующие образовательную и культурную жизнь и их развитие. Анализ фактов показывает этапы реализации национальной программы под лозунгом «Одна нация, одна культура», взаимные визиты представителей сфер культуры, искусства и образования и совместные мероприятия, организованные РА и Арцахом, а также с участием зарубежных молодежных организаций. Выявляются недостатки и ошибки в образовательной и культурной жизни. Также проанализированы и показаны те успехи и подвижки, которые были заметны в образовательной и культурной жизни Арцаха перед 44-дневной катастрофической войной 2020 года.

SUMMARY

Educational Life in Artsakh in 1991-2020

Edik Minasyan

Dean of YSU Faculty of History

Doctor of Historical Sciences, Professor

Keywords: Artsakh Republic, Republic of Armenia, Republic of Azerbaijan, educational transformations, cultural life, schools, pre-school education, Artsakh State University, newspapers, magazines, library, theater, architecture and sculpture, educational and cultural centers.

The article analyzes the press, archive materials, published literature and facts, shows the heroic struggle of the Armenians of Artsakh to overcome many obstacles in the difficult war conditions in Artsakh, making stress on the cultural and educational life. As a result, owing to the resilience of the Armenians of Artsakh, not only were the successes achieved in the educational and cultural life preserved, but also owing to the transformations we saw new developments in the end of the 20th century and in the period of two decades of the 21st century.

Becoming an independent republic, Artsakh also got an opportunity to change the existing

political order, to solve the social-economic, educational and cultural problems on its own. After the proclamation of the NKR, the reforms in the field of general education started. Following the example of the Republic of Armenia, the principles of creating a national school were developed, new educational programs and textbooks were compiled. The NKR National Assembly adopted a law according to which the education of Armenian children was to be held in Armenian schools. Priority was given to the national upbringing of pupils, social activity, the formation and development of knowledge, abilities and creative abilities. Chronologically, the process of formation and transformation of the educational system of the Artsakh Republic and the directions of development are considered in the stages of transition (1991-1995), stabilization (1996-2002), establishment (2002-2008), radical transformations and development (2008-2020). In fact, the educational and cultural system of Artsakh was completely included in the educational and cultural system of Armenia, it was integrated into it. Numerous facts show the progress made in the post-war period in the field of expanding the network of secondary schools, increasing the number of teachers and pupils, and improving the quality of general education. Comparative analysis of statistical data shows the large-scale school construction in the liberated territories of the NKR, also in the capital city, with the help of the investments of Armenian charitable organizations and individual benefactors, construction of new educational and cultural centers, emergence of new publishing houses, media, expansion of library network, museums, houses-museums of eminent figures, scientific, cultural, ethnographic centers, musical schools, theatrical studios, schools for actors, creation of architectural-sculptural complexes, etc. At the same time, the laws and legislative acts adopted by the Artsakh Government regulating the educational and cultural life and their development are being used. The analysis of the facts shows the stages of implementation of the national program of the slogan “One Nation, One Culture”, the mutual visits of the representatives of the fields of culture, art and education and joint events, organized by the RA and Artsakh, as well as with the participation of foreign youth organizations. The shortcomings and mistakes in the educational and cultural life are revealed. The progress and progress that was noticeable in the educational and cultural life of Artsakh before the 44-day catastrophic war of 2020, has also been analyzed and shown.